ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ռուստամ Բադասյանի՝ 2018թ. դեկտեմբերի 3-7-ը ք.Ստրասբուրգ (Ֆրանսիայի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

   Ռուստամ Բադասյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Ք.Ստրասբուրգ, Ֆրանսիայի Հանրապետություն, 2018 թվականի դեկտեմբերի 3-7-ը

4. **Հրավիրող կողմը՝**

   Եվրոպայի խորհուրդ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

Գործուղման նպատակ է հանդիսացել ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) ներկայացուցիչների հետ համատեղ Մանիվալի 57-րդ պլենար նիստին մասնակցելը: Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման միջոցառումների գնահատման փորձագետների կոմիտեի օրակարգում ընգրկված էին բազմապրոֆիլ հարցեր: Այցի արդյունքում ակնկալվում էր ծանոթանալ նշված ոլորտի վերջին զարգացումներին, տարբեր երկրների առաջընթացին ՖԱԹՖ-ի (ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբ) հանձնարարականների կատարման մասով, կամավոր հարկային հայտարարագրման ինստիտուտի կիրառությանը և այդ շրջանակներում փողերի լվացման տեսանկյունից անհրաժեշտ քայլերի իրականացմանը:

6. **Քննարկված թեմաները՝**

Քննարկվել է Չեխիայի Հանրապետության և Լիտվայի Հանրապետության կողմից ՖԱԹՖ-ի հանձնարարականների կատարման 5-րդ փուլի հարցերը, Մոլդովայի կողմից կամավոր հարկային հայտարարագրման ինստիտուտի (նշված ինստիտուտի ներդրման պարագայում, երբ նախատեսվում է հարկային համաներում կամ ակտիվների վերադարձ և օրինականացում, անհրաժեշտ է պահպանել մի շարք սկզբունքներ, նախապես տեղեկացնել Մանիվալի քարտուղարությանը մինչև օրենքի նախագծի մշակումը, ապահովել ակտիվների վերադարձի շրջանակներում դրանց ծագման աղբյուրի հասանելիությունը, չբացառել ՓԼ/ԱՖ (Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելում) օրենսդրության կիրառումը և այլն) ներդրման հարցերը: Քննարկվել են նաև բազմաթիվ այլ հարցեր, որոնք վերաբերում էին առցանց տեղեկատվության ստացմանը, մշակմանը, փողերի լվացմանը նախորդող հանցագործությունների հայտնաբերմանը, փողերի լվացմանը բնորոշ հատկանիշների վերհանմանը, միջազգային համագործակցությանը և այլն:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Քննարկումները տեղի են ունեցել նիստի ֆորմատով, որին մասնակցել են ԵՄ անդամ պետությունների ներկայացուցիչները: Քննարկվել են նախորդ կետում նշված հարցերը

կանոնադրությամբ սահմանված ընթացակարգով: Միաժամանակ, նիստի շրջանակներից դուրս հանդիպել եմ Համաշխարհային բանկի ներկայացուցչին, ում հետ քննարկվել է STAR համակարգի ներդման, դրա շրջանակներում միջազգային համագործակցության և նշված ինտիտուտին առնչվող այլ մասնագիտական հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ՀՀ վերաբերյալ որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել: Միաժամանակ, համագործակցություն է հաստատվել երկրների մի շարք ներկայացուցիչների հետ անհրաժեշտ մասնագիտական հարցերի հնարավոր քննարկման համար:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Պլենար նիստի արդյունքում քննարկվել են բազմաբովանդակ հարցեր, որոնք ուղղակիորեն ՀՀ-ին չէին վերաբերում: Նկատի ունենալով, որ ՀՀ ԿԲ միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատվել է առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագրավման ինստիտուտի ներդրման հայեցակարգը և ձևավորվել է աշխատանքային խումբ, Համաշխարհային բանկի ներկայացուցչի հետ քննարկվել է STAR համակարգի ներդրման մասին հարցեր, պայմանավորվածություն է ձեռք բերվել մի շարք խնդրահարույց հարցերի մասին տեղեկատվություն փոխանակելու վերաբերյալ:

12/10/2018

X

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝ Signed by: Ekeng CJSC

10.12.2018թ.